ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 օգոստոսի 2011թ. թիվ 61- Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով ''Առավոտ'' թերթի 2011թ. 23.07.2011թ. թիվ 138/3985 համարում զետեղված ''Տավուշում դեղը թանկ է'' հոդվածը

Կ ա ր գ ա դ ր ում եմ.

1. Ստեղծել հանձնախումբ հետևյալ կազմով.

   Սամվել Քամալյան – Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, դեղագետ,

   Վլադիմիր Խառատյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ,

   Արմենուհի Մարկոսյան - ''Դիլիջանի ԲԿ'' ՓԲԸ-ի վերստուգող,

   Անուշ Աբովյան - ''Նոյեմբերյանի ԲԿ'' ՓԲԸ-ի դեղագետ,

   Յուրա Արամյան – երդի ԲԿ'' ՓԲԸ-ի վերստուգող:

2. Սեղմ ժամկետում իրականացնել առաջին անհրաժեշտության դեղորայքի գների ուսումնասիրություն և ներկայացնելտեղեկանք:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Կ. Դովլաթբեկյանի վրա:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

11 օգոստոսի 2011թ.
ք. Իջևան